ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2012 թ. թիվ 7/1685/

11. ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպության տիպային /օրինակելի/ կանոնադրության նախագծի հաստատում

ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ ԳԱԱ նախագահության, բաժանմունքների և գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները՝ հաստատել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպության տիպային /օրինակելի/ կանոնադրության նախագիծը /կցվում է/:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված է ՀՀ ԳԱԱ
նախագահության 2012թ.
մայիսի 16-ի h.6/1684/ որոշմամբ

Տ Ի Պ Ա Յ Ի Ն (Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի) Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) համակարգի գիտական և գիտատեխնոլոգիական կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կառավարության, հիմնադրած և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություններ են (այսուհետ՝ կազմակերպություն), որոնց կառավարումը լիազորված է իրականացնել Ակադեմիային:

2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քաղաքացիական օրենսգրքի, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին», Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ու «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի» կանոնադրության ու սույն կանոնադրության համաձայն:

3. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

4. Կազմակերպության անվանումն է՝
հայերեն լրիվ՝ _____ պետական ոչ առևտրային կազմակերպություն,
հայերեն կրճատ՝ _____ ՊՈԱԿ,
ռուսերեն լրիվ՝ _____,
ռուսերեն կրճատ՝ _____,
անգլերեն լրիվ՝ _____,
անգլերեն կրճատ՝ _____,

5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ _____:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

6. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը մասնագիտացմանը համապատասխան գիտական, գիտատեխնիկական հետազոտությունների և մշակումների, գիտակրթական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումն է:

7. Կազմակերպությունն իր առջև դրված խնդիրները լուծելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

ա) որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղություններն ու գիտահետազոտական ծրագրերը,

բ) հայտարարում է մրցույթներ գիտական ստորաբաժանումների ղեկավարների և գիտական աշխատողների թափուր տեղերի համար,

գ) պլանավորում և իրականացնում է գիտական կադրերի պատրաստումը, պարբերաբար (առնվազն հինգ տարին մեկ անգամ) անց է կացնում գիտական աշխատողների ատեստավորում,

դ) ստեղծում է հիմնադրամներ,

ե) կազմում է կազմակերպության խմբագրական-հրատարակչական գործունեության պլանները, աջակցում տպագրության համար երաշխավորված աշխատանքների հրատարակմանը:

8. Կազմակերպությունը կարող է մասնակցել հայրենական և միջազգային գիտական ընկերությունների ու միությունների գործունեությանը, հրավիրել միջազգային գիտաժողովներ, կազմակերպել սեմինարներ:

9.Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) գիտահետազոտական, գիտատեխնիկական, արտադրական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում,

բ) խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում,

գ) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում,

դ) մագիստրոսական, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթության կազմակերպում,

ե) մագիստրոսական և հետբուհական մասնագիտական կրթության իրականացման նպատակով օտարերկրյա քաղաքացիների համար նախապատրաստական կրթության կազմակերպում,

զ) միջազգային գիտաուսումնական ծրագրերի իրականացում,

է) աշխատողների և սովորողների հանրային սննդի կազմակերպում և սպասարկում:

10. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթն ուղղորդվում է կազմակերպության կանոնադրական խնդիրների իրականացմանը:

11. Կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը՝ ՀՀ կառավարությունը, նրա լիազորված մարմինը՝ Ակադեմիան, և գործադիր մարմինը՝ տնօրենը:

13. Հիմնադրի լիազորությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

14. Պետական լիազորված մարմնի՝ Ակադեմիայի լիազորություններն են.

ա) կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով կառավարման մարմինների ձևավորում և լիազորությունների վաղաժամկետ դադարեցում,

բ) կազմակերպության գործունեության վերահսկողություն,

գ) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունների լսում, նրանց գործունեության ստուգման արդյունքների քննարկում,

դ) կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանման վերահսկողություն, վարձակալության թույլտվության տրամադրում,

ե) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատում,

զ) հիմնադրի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում,

է) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծում և լուծարման հաշվեկշռի հաստատում:

15. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որը պատասխանատու է կազմակերպության գործունեության համար:

16. Կազմակերպության տնօրենի թեկնածությունն առաջադրելու իրավունք ունեն համապատասխան բաժանմունքի բյուրոն, կազմակերպության գիտական անձնակազմը, և տվյալ մասնագիտության գծով Ակադեմիայի անդամները: Թեկնածուների ընտրությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված «ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի (տնօրենի) պաշտոնում ընտրության ընթացակարգի: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գիտական կազմակերպության տնօրեն:

17. Կազմակերպության տնօրենը կարող է վաղաժամկետ ազատվել պաշտոնից կազմակերպության գիտական անձնակազմի առաջարկությամբ՝ փակ գաղտնի քվեարկության հիման վրա (ձայների երկու երրորդի առկայությամբ), համապատասխան բաժանմունքի առաջարկությամբ և Ակադեմիայի նախագահության որոշմամբ:

18. Կազմակերպության տնօրենը

ա) իրականացնում է կազմակերպության ընդհանուր ղեկավարումը,

բ) պատասխանատու է կազմակերպության գիտական ուղղությունների ընտրության և իրականացման համար,

գ) կենսագործում է գիտական խորհրդի և վերադաս մարմինների որոշումները,

դ) հետևում է կազմակերպության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովվածությանն ու գիտական թեմաների կատարմանը,

ե) հաշվետու է Ակադեմիայի համապատասխան բաժանմունքի բյուրոյին և նախագահությանը՝ կազմակերպության գործունեության համար,

զ) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՀ կառավարության և Ակադեմիայի որոշումներով սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

ը) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

թ) ղեկավարվելով «ՀՀ աշխատանքային օրենսդրության» դրույթներով՝ իրավասու է կնքել և լուծարել աշխատանքային պայմանագրեր կազմակերպության աշխատողների հետ:

19. Կազմակերպության գիտության գծով փոխտնօրենին և գիտական քարտուղարին տնօրենի առաջարկությամբ հաստատում է Ակադեմիայի համապատասխան բաժանմունքի բյուրոն:

20. Կազմակերպության գիտական խորհուրդն այդ կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող մարմինն է:

Գիտական խորհրդի կառուցվածքը և անդամների թիվը, տնօրենի առաջարկությամբ, հաստատում է Ակադեմիայի համապատասխան բաժանմունքի բյուրոն:

Տնօրենի ներկայացմամբ, ինչպես նաև գիտական անձնակազմի առաջադրմամբ, կազմակերպության առաջատար գիտնականները գիտական խորհրդի կազմում ընտրվում են գիտական անձնակազմի ընդհանուր ժողովում (համաժողովում): Ժողովն իրավազոր է, եթե ժողովին ներկա է անձնակազմի անդամների առնվազն երկու երրորդը: Գիտական խորհրդի անդամներն ընտրվում են փակ գաղտնի քվեարկությամբ՝ մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Կազմակերպությունում չաշխատող ճանաչված մասնագետները գիտական խորհրդի անդամ են ընտրվում տնօրենի ներկայացմամբ՝ բաց քվեարկությամբ:

Ի պաշտոնե և հրավիրված անդամների թիվը չպետք է գերազանցի գիտական խորհրդի անդամների թվի մեկ երրորդը:

Գիտական խորհրդի վերջնական կազմը հաստատում է Ակադեմիայի համապատասխան բաժանմունքի բյուրոն՝ տնօրենի ընտրության օրվանից 2 ամսվա ընթացքում:

21. Կազմակերպության տնօրենն ի պաշտոնե գիտական խորհրդի նախագահն է: Կազմակերպության գիտական քարտուղարը ի պաշտոնե գիտական խորհրդի քարտուղարն է:

Կազմակերպության գիտության գծով փոխտնօրենը և գիտական քարտուղարն ի պաշտոնե գիտական խորհրդի անդամներն են:

Գիտական խորհուրդն իրավասու է ընդունել որոշումներ, եթե նիստին մասնակցում է նրա կազմի առնվազն երկու երրորդը: Գիտական խորհրդի որոշումն ընդունված է համարվում, եթե նրա օգտին քվեարկել է ներկաների կեսից ավելին: Որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդը որոշում չի ընդունել փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու մասին:

22. Կազմակերպության գիտական խորհուրդը

ա) քննարկում և հաստատում է կազմակերպության գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան ու ծրագրերը, գիտական կադրերի պատրաստման, միջազգային գիտական համագործակցության հարցերը,

բ) համակարգում է գիտական թեմաներով կատարվող աշխատանքները,

գ) քննարկում է և հրատարակության երաշխավորում կազմակերպության աշխատողների ու տվյալ մասնագիտությամբ այլ կազմակերպություններում աշխատող հեղինակների պլանային և արտապլանային մենագրությունները, ժողովածուները և այլն,

դ) առնվազն տարին մեկ անգամ քննարկում և հաստատում է տնօրենի և գիտական ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններն ու առաջարկությունները կազմակերպության գիտական գործունեության վերաբերյալ,

ե) քննարկում է գիտության զարգացման հրատապ հիմնահարցեր, լսում գիտական հաղորդումներ,

զ) նշանակալի գիտական աշխատանքները, գյուտերն ու հայտնագործություններն առաջադրում է պարգևատրման, կազմակերպության գիտնականներին ներկայացնում է գիտական կոչումների շնորհման ու առաջադրում ընտրել ՀՀ ԳԱԱ-ի կազմում,

է) հաստատում է գիտական աշխատողների ատեստավորման արդյունքները:

23. Կազմակերպության գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարներն ընտրվում են կազմակերպության գիտական խորհրդի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Ընտրությունների, պայմանների և ժամկետի մասին մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով մեկ ամիս առաջ տրվում է հայտարարություն:

24. Գիտական ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուներ առաջադրելու իրավունքը պատկանում է տնօրենին, կազմակերպության գիտական խորհրդին կամ ստորաբաժանման գիտական անձնակազմին:

Թեկնածուների առաջադրման համար փաստաթղթերը ներկայացվում են կազմակերպության գիտական քարտուղարին: Գրանցվում են այն թեկնածուները, ովքեր գրավոր համաձայնություն են տալիս ընտրություններին մասնակցելու մասին:

Գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմն իր ժողովում քննարկում է բոլոր գրանցված թեկնածությունները և փակ գաղտնի քվեարկությամբ, գիտական անձնակազմի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցությամբ կարծիք է հայտնում յուրաքանչյուր թեկնածության վերաբերյալ: Քննարկման և քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը ներկայացվում է կազմակերպության գիտական խորհուրդ:

Կազմակերպության գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում ընտրվելու մասին որոշումն ընդունվում է գիտական խորհրդի կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ, մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Եթե քվեարկության 2-րդ փուլի ընթացքում ընտրությունը չի կայանում, ապա կազմակերպության տնօրենն ընդունում է որոշում գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնակատարի նշանակման (2 տարի ժամկետով) մասին:

25. Ակադեմիայի անդամներին գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոններում նշանակում է կազմակերպության տնօրենը՝ 5 տարի ժամկետով, առանց մրցույթի և ընտրությունների:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

26. Կազմակերպությանը պատկանող գույքը բաղկացած է նրա սեփականությունը համարվող գույքից և գիտական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նրան անժամկետ, անհատույց օգտագործման համար ամրացված գույքից:

27. Կազմակերպությունը պետական առաջադրանքի կատարումից ազատ շենքերն ու շինությունները, հողատարածքը, ինչպես նաև արտադրական, պահեստային և մյուս կառույցները, ժամանակավորապես չօգտագործվող սարքավորումներն ու փոխադրամիջոցներն Ակադեմիայի թույլտվությամբ կարող է ժամանակավորապես վարձակալության հանձնել այլ կազմակերպությունների: Ստացված վարձավճարը կարող է օգտագործվել կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման համար:

28. Կազմակերպությունների ֆինանսական միջոցները ձևավորվում են.

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,

բ) գիտական, տնտեսական և հրատարակչական–տպագրական գործունեությունից ստացված եկամուտներից,

գ) կրթության ոլորտում ծավալված ծառայություններից,

դ) սեփական մշակումների իրացմանն առնչվող գիտաարտադրական գործունեությունից ստացված եկամուտներից,

ե) հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից,

զ) իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ արտերկրի) նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից,

է) կազմակերպության գույքից և գույքային իրավունքից ստացված եկամուտներից,

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ միջոցներից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

29. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով:

30. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: